

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

«04» ապրիլի 2011թ.

N 3-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՒ ԿԵՆՏՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԻԶ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ, ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԶԱՓԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀՐԱՄԱՆՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերին, 11-րդ հոդվածին համապատասխան՝

*Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ*

1. Հաստատել՝

1) խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով իրականացվող առևտրական գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերով սահմանված սահմանային չափերի համապատասխան ցուցանիշների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասում նշված համամասնությունների մասին տեղեկանքի ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի,

5) «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով և 25<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով սահմանված սահմանային չափերի համապատասխան ցուցանիշների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի,

6) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 6 հավելվածի,

7) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության սահմանային չափի ցուցանիշների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 7 հավելվածի,

8) բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպման ոլորտում իրականացվող գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 8 հավելվածի,

9) ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 9 հավելվածի,

10) վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 10 հավելվածի,

11) ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 11 հավելվածի,

12) ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության համար սահմանային չափի ցուցանիշների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 12 հավելվածի,

13) ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 13 հավելվածի,

14) ավտոկանգառների գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 14 հավելվածի,

15) արդյունագործական ձկնորսության գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակցիցների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 15 հավելվածի,

16) խաղատների գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 16 հավելվածի,

17) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 17 հավելվածի,

18) շահումով խաղային ավտոմատների շահագործման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 18 հավելվածի,

19) խաղարկությունով և ոչ խաղարկությունով, ինչպես նաև համակցված վիճակախաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 19 հավելվածի,

20) համակարգչային խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 20 հավելվածի,

21) բիլիարդ խաղի կազմակերպման գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 21 հավելվածի,

22) ատամնաբուժական ծառայությունների մատուցման գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 22 հավելվածի:

23) *ատամնատեխնիկական ծառայությունների մատուցման գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 23 հավելվածի:<sup>\*1)</sup>*

24) *մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի կազմակերպման գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 24 հավելվածի.*

25) *մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպման գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 25 հավելվածի.*

26) *մեխանիկական և էլեկտրական մանկական ավտոմեքենաների,<sup>\*8)</sup> հեծանիվների, անվաչմուշկների, սկուտերների, հիդրոսկուտերների և հովերբորդների վարձույթի համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 26 հավելվածի.<sup>\*6)</sup>*

27) *ըստ նախնական պատվերների՝ համապատասխան պայմանագրերի համաձայն, պատվիրատուի ներքին սպառման համար նախատեսված օբյեկտներում հանրային սննդի ծառայությունների մատուցման գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 27 հավելվածի:<sup>\*9)</sup>*

2. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության պետի 2000 թվականի դեկտեմբերի 23-ի ««Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքի 10 հոդվածի 1-ին

կետով, 11 հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ձևերը հաստատելու մասին» թիվ 37/Ղ հրամանը,

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության պետի 2003 թվականի ապրիլի 10-ի «Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված որոշ ձևերը հաստատելու և ԼՂՀ ՀՊՎ պետի 23.12.00թ. թիվ 37/Ղ հրամանում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» թիվ 17/Ղ հրամանը,

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2008 թվականի ապրիլի 15-ի «Խանութների, կրպակների (տաղավարների) առևտրական գործունեության, առևտրի իրականացման վայրերում առևտրական գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների, սահմանային չափերի համապատասխան ցուցանիշների վերաբերյալ հայտարարության ձևերը և դրանց լրացման կարգերը, ավտոտրանսպորտային միջոցների գազալիցքման (գազալիցքավորման) գործունեության համար հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի վերաբերյալ հայտարարության ձևը և լրացման կարգը հաստատելու ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության պետի 2000 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 37/Ղ հրամանում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 14/Ն հրամանը,

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2008 թվականի նոյեմբերի 25-ի «Տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի հայտարարության ձևերը և դրանց լրացման կարգերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության պետի 2000 թվականի դեկտեմբերի 23-ի N 37/Ղ հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 36/Ն հրամանը:

**ՊԵՏ,**  
**Հ/Ծ 1-ԻՆ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ**

**Ա. ԲԱԼԱՅԱՆ**

ՁԼ

\_\_\_\_\_ սպասարկող ստորաբաժանման  
 պետ՝ \_\_\_\_\_

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ԽԱՆՈՒԹՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ (ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ) ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
 ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ  
 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԴԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. Հարկ վճարողի անվանումը \_\_\_\_\_
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) 

--	--	--	--	--	--	--	--	--	--
3. Գտնվելու վայրը \_\_\_\_\_
4. Գործունեության իրականացման վայրը (հասցեն) \_\_\_\_\_

5. «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված պատիկ թիվը	20 <sup>*8)</sup>
--	-------------------

6. Ելակետային տվյալներ և ուղղիչ գործակիցներ	Խանութ	Կրպակ (տաղավար), այլ վաճառատեղ	Բնակելի տարածք
Ելակետային տվյալներ			
6.1. Առևտրական տարածքը (մ.քառ.)			X
6.2. Ապրանքների զբաղեցրած ցուցադրման մակերեսը	X	X	
Ուղղիչ գործակից			
6.3. Գտնվելու վայրի հետ կապված			
Լրացուցիչ ուղղիչ գործակից			
6.4. Բացառապես նկուղային հարկերում տեղադրված լինելու հետ կապված		0.8	X

7. Հայտարարությունը ներկայացվում է 20 թ. հետևյալ ամիսների համար՝

Ամիսը	Գործունեության իրականացման օրերը	Ընդամենը	Ամսվա համար հաստատագրված վճարի չափը <sup>*5)</sup> , հազար դրամ	Նվազեցման ենթակա հաստատագրված վճարի չափը, հազար դրամ																										
					1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
				*9)																										

8. (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>3),\*9)</sup>

Վճարողի  
 (պաշտոնատար անձի)  
 ստորագրությունը

գրանցված է \_\_\_\_\_ սպասարկող  
 ստորաբաժանման կողմից  
 թիվ \_\_\_\_\_ «\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

Կ.Տ.  
 «\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

Կ.Տ.

<sup>5)</sup>

\* Հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս Սրբեփանակերպ քաղաքում լրացուցիչ կիրառվում է 0,5 գործակից, իսկ այլ վայրերում՝ 0,3 գործակից: \*5),\*6),\*7)\*8)

**ԽԱՆՈՒԹՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ (ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ) ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Հայտարարությունը ներկայացվում է առևտրի իրականացման վայրերից դուրս գտնվող 10 քառակուսի մետր առևտրական տարածքը չգերազանցող խանութների, կրպակների (տաղավարների) և այլ վաճառատեղերի միջոցով առևտրական գործունեություն իրականացնող հաստատագրված վճար վճարողների կողմից:

Հայտարարությունը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային մարմին: Հարկային մարմնի կողմից հայտարարությունը հաշվառվելուց (գրանցվելուց) և կնքվելուց հետո մեկ օրինակը վերադարձվում է հաստատագրված վճար վճարողին:

Գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար ներկայացվում է առանձին հայտարարություն:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը,

2-րդ կետում լրացվում է հարկային մարմնի կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),

3-րդ կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի գտնվելու վայրը,

4-րդ կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի գործունեության իրականացման վայրը (հասցեն),

6.1-րդ կետում լրացվում է խանութի կամ կրպակի (տաղավարի) կամ այլ վաճառատեղի առևտրական տարածքը (մ<sup>2</sup>),

6.2-րդ կետում լրացվում է բնակելի տարածքից (պատուհանից և այլն) անմիջականորեն վաճառք իրականացնելու դեպքում «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն որոշվող մակերեսը (մ<sup>2</sup>),

6.3-րդ կետում լրացվում է խանութի, կրպակի (տաղավարի), այլ վաճառատեղի կամ բնակելի տարածքի գտնվելու վայրի հետ կապված «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ» կետերով սահմանված համապատասխան ուղղիչ գործակիցը,

6.4-րդ կետում լրացվում է «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ բացառապես նկուղային հարկերում տեղադրված խանութի, կրպակի (տաղավարի) այլ վաճառատեղի համար լրացուցիչ ուղղիչ գործակիցը (0.8):

7-րդ կետի աղյուսակի «Ամիսը» սյունակում հաջորդականությամբ լրացվում են գործունեության իրականացման համապատասխան ամիսները՝ տառերով:

«Գործունեության իրականացման օրերը» սյունակում գործունեության իրականացման օրերը պարտադիր նշվում են օղակով, իսկ հանգստյան օրերը՝ անկյունագծից անկյունագիծ խաչաձև ջնջելու միջոցով: Լրիվ ամիս (բոլոր օրերը) աշխատել նախատեսելու դեպքում օղակի ձևով նշումներ չեն կատարվում: «Ընդամենը» սյունակում լրացվում է համապատասխան ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրերի քանակը՝ թվով և տառերով: «Ամսվա համար հաստատագրված

վճարի չափը, հազար դրամ» սյունակում լրացվում է համապատասխան ամսվա համար հաստատագրված վճարի չափը՝ հազար դրամով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ (20<sup>\*8)</sup> x ելակետային տվյալներ x ուղղիչ գործակից x լրացուցիչ ուղղիչ գործակից): «Նվազեցման ենթակա հաստատագրված վճարի չափը, հազար դրամ» սյունակում լրացվում է համապատասխան ամսվա համար նվազեցման ենթակա հաստատագրված վճարի չափը՝ հազար դրամով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ:<sup>\*9)</sup>

(պարբերությունը ուժը կորցրած է ճանաչվել)<sup>\*3),\*9)</sup>

\_\_\_\_\_ սպասարկող ստորաբաժանման  
 պետ \_\_\_\_\_

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՂՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՕՐԵՆՔԻ 25-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ «Ա» ԵՎ «Բ» ԿԵՏԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ  
 ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. Հարկ վճարողի անվանումը \_\_\_\_\_
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) 

--	--	--	--	--	--	--	--
3. Գործունեության իրականացման վայրը (հասցեն) \_\_\_\_\_
4. Հայտարարությունը ներկայացվում է 20 թ. \_\_\_\_\_ համար  
*(նշվում է հաշվետու ժամանակաշրջանը՝ եռամսյակ կամ կիսամյակ)*

	<b>Ցուցանիշը</b>	<b>Չափի միավորը</b>	<b>Թվային արտահայտությամբ</b>
1.	Հաշվետու ժամանակաշրջանի (եռամսյակի կամ կիսամյակի) ապրանքաշրջանառության ծավալը, այդ թվում՝	հազ. դրամ	
1.1	ԱԱՀ-ից ազատված ապրանքատեսակների վաճառքից ստացված հասույթը	հազ. դրամ տես. կշիռը /տող 1.1/ տող 1x100/	
1.2	Առանց մաքսային մարմիններում ԱԱՀ վճարելու վճարողի կողմից ԼՂՀ ներմուծված ապրանքների վաճառքից ստացված հասույթը	հազ. դրամ տես. կշիռը /տող 1.2/ տող 1x100/	
2.	Առևտրական տարածքը	մ. քառ.	

Վճարողի  
 (պաշտոնատար անձի)  
 ստորագրությունը

Կ.Տ.

գրանցված է \_\_\_\_\_ սպասարկող  
 ստորաբաժանման կողմից  
 թիվ \_\_\_\_\_ «\_\_\_» 20 թ.

Կ.Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.

**«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
25-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ «Ա» ԵՎ «Բ» ԿԵՏԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԶԱՓԵՐԻ  
ՀԱՍՊՈՒՍՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Հայտարարությունը ներկայացվում է առևտրի իրականացման վայրերից դուրս գտնվող 10 քառակուսի մետր առևտրական տարածքը չգերազանցող խանութների, կրպակների (տաղավարների) և այլ վաճառատեղերի միջոցով առևտրական գործունեություն իրականացնող հաստատագրված վճար վճարողների կողմից:

Հայտարարությունը լրացվում և ներկայացվում է գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար՝ առանձին-առանձին:

Հայտարարությունը ներկայացվում է հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային մարմին:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը,

2-րդ կետում լրացվում է հարկային մարմնի կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),

3-րդ կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի կողմից գործունեության իրականացման վայրը (հասցեն),

4-րդ կետում լրացվում է գործունեության իրականացման այն հաշվետու ժամանակաշրջանը (եռամսյակ կամ կիսամյակ), որի համար ներկայացվում է հայտարարությունը,

Աղյուսակի 1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի առևտրի իրականացման վայրից դուրս գտնվող 10 քառակուսի մետր առևտրական տարածքը չգերազանցող տվյալ խանութի, կրպակի, տաղավարի կամ այլ վաճառատեղի միջոցով իրականացվող առևտրական գործունեությունից ստացված շրջանառության գումարը, 1.1-րդ կետում՝ ԱԱՀ-ից ազատված ապրանքատեսակների վաճառքից ստացված հասույթը՝ /տող 1.1/ տող 1x100/, 1.2-րդ կետում՝ առանց մաքսային մարմիններում ԱԱՀ վճարելու վճարողի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված ապրանքների վաճառքից ստացված հասույթը՝ /տող 1.2 / տող 1 x100/, 2-րդ կետում՝ խանութի, կրպակի, տաղավարի կամ այլ վաճառատեղի առևտրական տարածքը (մ<sup>2</sup>):



\_\_\_\_\_ սպասարկող ստորաբաժանման  
 պետ՝ \_\_\_\_\_

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՕՐԵՆՔԻ 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍՈՒՄ ՆԵՎԱԾ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. Հարկ վճարողի անվանումը \_\_\_\_\_
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) 

--	--	--	--	--	--	--	--
3. Գործունեության իրականացման (վայրը) հասցեն \_\_\_\_\_
4. Վաճառահանման կետի տեսակը՝ \_\_\_\_\_
5. Տեղեկանքը ներկայացվում է 20 թ. \_\_\_\_\_ համար  
 (նշվում է հաշվետու ժամանակաշրջանը (եռամսյակ կամ կիսամսյակ))

	Ցուցանիշը	Չափի միավոր	Թվային արտահայտությամբ
1.	Հաշվետու ժամանակաշրջանի (եռամսյակի կամ կիսամսյակի) ապրանքաշրջանառության ծավալը, այդ թվում՝	հազ.դրամ	
2.	Այլ ապրանքների վաճառքից ստացված հասույթը	հազ.դրամ	
3.	Այլ ապրանքների վաճառքից ստացված հասույթի տեսակարար կշիռը ապրանքաշրջանառության ծավալի մեջ	%	

Վճարողի  
 (պաշտոնատար անձի)  
 ստորագրությունը

Կ.Տ.

գրանցված է  
 ստորաբաժանման կողմից  
 թիվ \_\_\_\_\_ «\_\_\_» 20 թ.

Կ.Տ.

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

**«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԻ 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍՈՒՄ ՆՇՎԱԾ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Տեղեկանքը ներկայացվում է «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի «բ», «գ», «դ» և «ե» կետերով նախատեսված գործունեություն իրականացնող հաստատագրված վճար վճարողների կողմից: Տեղեկանքը լրացվում և ներկայացվում է գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար՝ առանձին-առանձին:

Տեղեկանքը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային մարմին: Հարկային մարմնի կողմից տեղեկանքը հաշվառվելուց (գրանցվելուց) և կնքվելուց հետո մեկ օրինակը վերադարձվում է հաստատագրված վճար վճարողին:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը,

2-րդ կետում լրացվում է հարկային մարմնի կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),

3-րդ կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի կողմից գործունեության իրականացման վայրը (հասցեն),

4-րդ կետում լրացվում է վաճառահանման կետի տեսակը,

5-րդ կետում լրացվում է գործունեության իրականացման այն հաշվետու ժամանակաշրջանը (եռամսյակ կամ կիսամյակ), որի համար ներկայացվում է տեղեկանքը,

Աղյուսակի՝

- 1-ին կետում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի (եռամսյակի կամ կիսամյակի), ապրանքաշրջանառության ծավալը՝ հազար դրամներով,

- 2-րդ կետում լրացվում է այլ ապրանքների վաճառքից ստացված հասույթը՝ հազար դրամներով,

- 3-րդ կետում լրացվում է այլ ապրանքների վաճառքից ստացված հասույթի տեսակարար կշիռը ապրանքաշրջանառության ծավալի մեջ (տող 2/ տող 1 x 100):

**Ձև**

\_\_\_\_\_ սպասարկող ստորաբաժանման  
 պետ՝ \_\_\_\_\_

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐՈՒՄ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
 ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ  
 ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԱՍԻՆ**

1. Հարկ վճարողի անվանումը \_\_\_\_\_

2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) 

--	--	--	--	--	--	--	--

3. Գտնվելու վայրը \_\_\_\_\_

4. Գործունեության իրականացման վայրը (հասցեն) \_\_\_\_\_

5. «Հաստատագրված վճարների մասին» օրենքի 25 <sup>2</sup> -րդ հոդվածով սահմանված պարիկ թիվը	660
---	-----

6. Ելակետային տվյալ և ուղղիչ գործակից	Խանութ, կրպակ (փաղավար) և այլ վաճառարեղ
6.1. Առևտրական փարածքը (ՄՔ)	
6.2. Գտնվելու վայրի հետ կապված	

Տարեթիվը, ամիսը	Հավաստագրում ներառված ամիսը	Ամսվա համար հաստատագրված վճարի չափը*, հազար դրամ	Նվազեցման ենթակա հաստատագրված վճարի չափը, հազար դրամ

Վճարողի  
 (պաշտոնադար անձի)  
 ստորագրությունը

գրանցված է \_\_\_\_\_ սպասարկող  
 ստորաբաժանման կողմից  
 թիվ \_\_\_\_\_ «\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

Կ.Տ.  
 «\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

Կ.Տ.

\* Հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս Ստեփանակերտ քաղաքում լրացուցիչ կիրառվում է 0,5 գործակից, իսկ այլ վայրերում՝ 0,3 գործակից:

(\*3),\*5),\*6),\*7)\*8)

## **ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐՈՒՄ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Հայտարարությունը ներկայացվում է առևտրի իրականացման վայրում գտնվող 10 քառակուսի մետր առևտրական տարածքը չգերազանցող խանութների, կրպակների, տաղավարների և այլ վաճառատեղերի միջոցով առևտրական գործունեություն իրականացնող հաստատագրված վճար վճարողների կողմից: Հայտարարությունը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային մարմին: Հարկային մարմնի կողմից հայտարարությունը հաշվառվելուց (գրանցվելուց) և կնքվելուց հետո մեկ օրինակը վերադարձվում է հաստատագրված վճար վճարողին:

Գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար ներկայացվում է առանձին հայտարարություն:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը:

2-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն):

3-րդ կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի գտնվելու վայրը:

4-րդ կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի գործունեության իրականացման վայրը (հասցեն):

6.1-ին կետում լրացվում է խանութի, կրպակի, տաղավարի կամ այլ վաճառատեղի առևտրական տարածքը (մ<sup>2</sup>):

6.2-րդ կետում լրացվում է խանութի, կրպակի, տաղավարի կամ այլ վաճառատեղի գտնվելու վայրի հետ կապված «Հաստատագրված վճարների մասին» օրենքի 25<sup>4</sup>-րդ հոդվածով սահմանված համապատասխան ուղղիչ գործակիցը:

Աղյուսակի «Տարեթիվը, ամիսը» սյունակում հաջորդականությամբ լրացվում են գործունեության իրականացման տարեթիվը և ամիսները, «Հավաստագրում ներառված ամիսը» սյունակում՝ հարկային արտոնություններից օգտվելու իրավունքը հաստատող հավաստագրի գործողության ժամկետում ներառված ամիսները, «Ամսվա համար հաստատագրված վճարի չափը, հազար դրամ» սյունակում՝ առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեությունից «Հաստատագրված վճարների մասին» օրենքի 25<sup>2</sup>-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված հաստատագրված վճարի չափը՝ հազար դրամով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ (660 x ելակետային տվյալ x ուղղիչ գործակից), իսկ «Նվազեցման ենթակա հաստատագրված վճարի չափը, հազար դրամ» սյունակում՝ համապատասխան ամսվա համար նվազեցման ենթակա հաստատագրված վճարի չափը՝ հազար դրամով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ:

\*3)

Ձև

\_\_\_\_\_ սպասարկող ստորաբաժանման  
 պետ՝ \_\_\_\_\_

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
 22-ՐԴ ՀՐԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ «Ա» ԿԵՏՈՎ ԵՎ 25<sup>1</sup>-ՐԴ ՀՐԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ «Ա» ԿԵՏՈՎ  
 ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱԹԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. Հարկ վճարողի անվանումը \_\_\_\_\_
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) 

--	--	--	--	--	--	--	--
3. Գործունեության տեսակը \_\_\_\_\_
4. Գործունեության իրականացման վայրը (հասցեն) \_\_\_\_\_
5. Հայտարարությունը ներկայացվում է 20 թ. \_\_\_\_\_ համար  
*(նշվում է հաշվետու ժամանակաշրջանը (երամսյակ կամ կիսամյակ))*

	<b>Ցուցանիշը</b>	<b>Չափի միավորը</b>	<b>Թվային արտահայտությամբ</b>
1.	Սահմանային չափը	հազ. դրամ	
2.	Հաշվետու ժամանակաշրջանի(երամսյակի կամ կիսամյակի) ապրանքաշրջանառության ծավալը	հազ. դրամ	
3.	Առևտրական տարածքը	մ. քառ.	
4.	Ապրանքաշրջանառության առևտրական տարածքի 1մ <sup>2</sup> ծավալը հաշվով (տող2/տող3)	հազ. դրամ	

Վճարողի  
 (պաշտոնատար անձի)  
 ստորագրությունը

Կ.Տ.

գրանցված է ստորաբաժանման կողմից  
 թիվ \_\_\_\_\_ «\_\_\_»

Կ.Տ.

20 թ.

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

**«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
22-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ «Ա» ԿԵՏՈՎ ԵՎ 25<sup>1</sup>-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ «Ա» ԿԵՏՈՎ  
ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԶԱՓԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Հայտարարությունը ներկայացվում է առևտրի իրականացման վայրերից դուրս գտնվող և առևտրի իրականացման վայրերում գտնվող 10 քառակուսի մետր առևտրական տարածքը չգերազանցող խանութների, կրպակների (տաղավարների) և այլ վաճառատեղերի միջոցով առևտրական գործունեություն իրականացնող հաստատագրված վճար վճարողների կողմից:

Հայտարարությունը լրացվում և ներկայացվում է գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար՝ առանձին-առանձին:

Հայտարարությունը ներկայացվում է հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային մարմին:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը,

2-րդ կետում լրացվում է հարկային մարմնի կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),

3-րդ կետում լրացվում է հաստատագրված վճարով հարկման ենթակա գործունեության տեսակը՝ «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «ա» և «ա<sup>1</sup>» կետերին համապատասխան,

4-րդ կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի գործունեության իրականացման վայրը (հասցեն),

5-րդ կետում լրացվում է գործունեության իրականացման այն հաշվետու ժամանակաշրջանը (եռամսյակ կամ կիսամյակ), որի համար ներկայացվում է հայտարարությունը,

Աղյուսակի 1-ին կետում լրացվում է «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով կամ 25<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով սահմանված սահմանային չափը, 2-րդ կետում՝ հաստատագրված վճար վճարողի առևտրի իրականացման վայրից դուրս և առևտրի իրականացման վայրում գտնվող 10 քառակուսի մետր առևտրական տարածքը չգերազանցող տվյալ խանութի, կրպակի, տաղավարի և այլ վաճառատեղի միջոցով իրականացվող առևտրական գործունեությունից ստացված շրջանառության գումարը, 3-րդ կետում՝ խանութի, կրպակի, տաղավարի կամ այլ վաճառատեղի առևտրական տարածքը (մ<sup>2</sup>), 4-րդ կետում՝ մեկ քառակուսի մետրի հաշվով ապրանքաշրջանառության ծավալը (տող2 / տող3):

**Ձև**

\_\_\_\_\_ սպասարկող սպորտաթանման  
 պետի՝ \_\_\_\_\_

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ  
 ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂԴԻՉ  
 ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. Հարկ վճարողի անվանումը \_\_\_\_\_

2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) 

--	--	--	--	--	--	--	--

3. Հանրային սննդի օբյեկտի գտնվելու վայրը (հասցեն) \_\_\_\_\_

4. Հանրային սննդի օբյեկտի տեսակը \_\_\_\_\_

5. «Հաստատագրված վճարների մասին» օրենքի 34-րդ հոդվածով սահմանված պատիկ թիվը	1 500
---	-------

6. Ելակետային տվյալ և ուղղիչ գործակիցներ	Շինությունների ներսում	Բացօթյա	Արտաքին բուֆետ
<b>Ելակետային տվյալ</b>			
6.1. Սպասարկման մակերեսը (մ <sup>2</sup> )			
<b>Ուղղիչ գործակից</b>			
6.2. Տարածքի օգտագործման	X	0,7	X
<b>Լրացուցիչ ուղղիչ գործակիցներ</b>			
6.3. Բար-վարյեյտների, բեմական ցուցադրումներ ունեցող այլ վայրերի (օբյեկտների), ինչպես նաև գիշերային (24:00-ից մինչև 6:00) ժամերին աշխատող բարերի համար			X
6.4. Սպառողների սահմանափակ քանակակազմ ունեցող վայրերի համար			X
6.5. Մայիս-սեպտեմբեր ամիսների համար	X	1,2	X
6.6. Հանրային սննդի օբյեկտի գտնվելու վայրի հետ կապված			
6.7. Առևտրի իրականացման վայրերում արտաքին բուֆետների (շարժական և հատուկ սարքավորումներով խոհարարական արտադրանքի պատրաստմամբ և	X	X	0,5

սպասարկմամբ զբաղվող) և սպասարկման սրահ չունեցող այլ վայրերի համար			
6.8. Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու շրջաններում հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված՝ 80 քառակուսի մետր և ավելի մակերես ունեցող սրահի միջոցով իրականացվող գործունեության համար		X	X
7. Հաստատագրված վճարի ամսական չափը* <sup>1</sup> հազար դրամ, առանց մայիս-սեպտեմբեր ամիսների համար նախատեսված 1,2 գործակցի կիրառման			
7.1. Հաստատագրված վճարի ամսական չափը* <sup>1</sup> հազար դրամ, մայիս-սեպտեմբեր ամիսների համար նախատեսված 1,2 գործակցի կիրառմամբ	X		X

<b>Օբյեկտի զբաղեցրած սպասարկման սրահի (սրահների) մակերեսների հետ կապված լրացուցիչ ուղղիչ գործակից</b>				
մինչև 50մ <sup>2</sup>	մինչև 150մ <sup>2</sup>	մինչև 300մ <sup>2</sup>	300մ <sup>2</sup> գերազանցող մակերեսի համար	500մ <sup>2</sup> գերազանցող մակերեսի համար
<b>0,75</b>	<b>0,85</b>	<b>1,0</b>	<b>0,6</b>	<b>0,3</b>

<b>Տարեթիվը, ամիսը</b>	<b>Հավաստագրում ներառված ամիսը</b>	<b>Ամսվա համար հաստատագրված վճարի չափը*, հազար դրամ</b>	<b>Նվազեցման ենթակա հաստատագրված վճարի չափը, հազար դրամ</b>

Վճարողի  
(պաշտոնատար անձի)  
ստորագրությունը

գրանցված է \_\_\_\_\_ սպասարկող  
ստորաբաժանման կողմից  
թիվ \_\_\_\_\_ «\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

Կ.Տ.

Կ.Տ.

«\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

\* Հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս (բացառությամբ Ստեփանակերտ քաղաքի) լրացուցիչ կիրառվում է 0,3 գործակից:

(\*2),(\*3),\*5),\*6),\*7),\*8)



**ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆԵԴԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ  
ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂԴԻՉ  
ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Հայտարարությունը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային մարմին: Հարկային մարմնի կողմից հայտարարությունը հաշվառվելուց (գրանցվելուց) և կնքվելուց հետո մեկ օրինակը վերադարձվում է հաստատագրված վճար վճարողին:

Գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար ներկայացվում է առանձին հայտարարություն:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը:

2-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ-ն):

3-րդ կետում լրացվում է հանրային սննդի օբյեկտի գտնվելու վայրը (հասցեն):

4-րդ կետում լրացվում է հանրային սննդի օբյեկտի տեսակը:

6.1-ին կետում լրացվում է հաստատագրված վճարի չափի հաշվարկման համար ելակետային տվյալը՝ հանրային սննդի օբյեկտի սպասարկման սրահի մակերեսը (մ<sup>2</sup>):

6.3-րդ կետում լրացվում է «Հաստատագրված վճարների մասին» օրենքի 36-րդ հոդվածով սահմանված լրացուցիչ ուղղիչ գործակիցը (1,5):

6.4-րդ կետում լրացվում է սպառողների սահմանափակ քանակակազմ ունեցող վայրերի համար «Հաստատագրված վճարների մասին» օրենքի 36-րդ հոդվածով սահմանված լրացուցիչ ուղղիչ գործակիցը (0,5):

6.6-րդ կետում լրացվում է Շուշիի և Քաշաթաղի շրջաններում գտնվող հանրային սննդի օբյեկտների համար «Հաստատագրված վճարների մասին» օրենքի 36-րդ հոդվածով սահմանված լրացուցիչ ուղղիչ գործակիցը (0,5):

6.8-րդ կետում լրացվում է Ասկերանի, Մարտակերտի և Մարտունու շրջաններում հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված՝ 80 քառակուսի մետր և ավելի մակերես ունեցող սրահի միջոցով հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար «Հաստատագրված վճարների մասին» օրենքի 36-րդ հոդվածով սահմանված լրացուցիչ ուղղիչ գործակիցը (0,5):

7-րդ կետի համապատասխան սյունակում լրացվում է հանրային սննդի ոլորտում գործունեության իրականացման համար «Հաստատագրված վճարների մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն հաշվարկված հաստատագրված վճարի չափը՝ հազար դրամով՝ ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ (1 500 x ելակետային տվյալ x ուղղիչ գործակիցներ): Ընդ որում՝ 7-րդ կետում բացօթյա վայրերի համար հաստատագրված վճարի չափը հաշվարկվում է առանց մայիս-սեպտեմբեր ամիսների համար նախատեսված 1,2 գործակցի կիրառման, իսկ 7.1-ին կետում՝ մայիս-սեպտեմբեր ամիսների համար նախատեսված 1,2 գործակցի կիրառմամբ:

Աղյուսակի «Տարեթիվը, ամիսը» սյունակում հաջորդականությամբ լրացվում են գործունեության իրականացման տարեթիվը և ամիսները, «Հավաստագրում ներառված ամիսը» սյունակում՝ հարկային արտոնություններից օգտվելու իրավունքը հաստատող հավաստագրի գործողության ժամկետում ներառված ամիսները, «Ամսվա համար հաստատագրված վճարի չափը, հազար դրամ» սյունակում՝ 7-րդ կամ 7.1-ին կետի յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված հաստատագրված վճարի չափը՝ հազար

դրամով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ, իսկ «Նվազեցման ենթակա հաստատագրված վճարի չափը, հազար դրամ» սյունակում՝ համապատասխան ամսվա համար նվազեցման ենթակա հաստատագրված վճարի չափը՝ հազար դրամով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ:

\*2),\*3)

Ձև

\_\_\_\_\_ սպասարկող ստորաբաժանման  
պետ՝ \_\_\_\_\_

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆԵՂԻ ՈՒՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԶԱՓԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. Հարկ վճարողի անվանումը \_\_\_\_\_
2. Հարկ վճարողի հաշվառման համարը 

--	--	--	--	--	--	--	--

 (ՀՎՀՀ)
3. Գործունեության իրականացման վայրը (հասցեն) \_\_\_\_\_
4. Հայտարարությունը ներկայացվում է 20 թ. \_\_\_\_\_ համար  
(նշվում է հաշվետու ժամանակաշրջանը՝ եռամսյակ կամ կիսամյակ)

	<b>Ցուցանիշը</b>	<b>Զափի միավորը</b>	<b>Թվային արտահայտությամբ</b>
1.	Սահմանային չափը	հազ.դրամ	
2.	Հաշվետու ժամանակաշրջանի (եռամսյակի կամ կիսամյակի) ապրանքաշրջանառության ծավալը	հազ.դրամ	
3.	Հանրային սննդի օբյեկտի սպասարկման մակերեսը	մ. քառ.	
4.	Ապրանքաշրջանառության ծավալը սպասարկման մակերեսի մեկ մ <sup>2</sup> հաշվով (տող 2/տող3)	հազ. դրամ	

Վճարողի  
(պաշտոնատար անձի)  
ստորագրությունը

Կ.Տ.

գրանցված է ստորաբաժանման կողմից  
թիվ \_\_\_\_\_ «\_\_\_» 20 թ.

Կ.Տ.

«\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

**ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ՈՒՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ  
ՉԱՓԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Հայտարարությունը լրացվում և ներկայացվում է գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար առանձին:

Հայտարարությունը ներկայացվում է հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային մարմին:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը,

2-րդ կետում լրացվում է հարկային մարմնի կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),

3-րդ կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի գործունեության իրականացման վայրը (հասցեն),

4-րդ կետում լրացվում է գործունեության իրականացման այն հաշվետու ժամանակաշրջանը (եռամսյակ կամ կիսամյակ), որի համար ներկայացվում է հայտարարությունը:

Աղյուսակի 1-ին կետում լրացվում է «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանային չափը, 2-րդ կետում՝ հանրային սննդի օբյեկտի հաշվետու ժամանակաշրջանի ապրանքաշրջանառության ծավալը, 3-րդ կետում՝ տվյալ հանրային սննդի օբյեկտի սպասարկման սրահի մակերեսը, իսկ 4-րդ կետում՝ տվյալ հանրային սննդի օբյեկտի սպասարկման սրահի մեկ քառակուսի մետրի հաշվով ապրանքաշրջանառության ծավալը (տող2 / տող3):

**Ձև**

\_\_\_\_\_ սպասարկող ստորաբաժանման  
պետ՝ \_\_\_\_\_

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՑՆՑՈՒՂԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ  
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԱՍԻՆ**

1. Հարկ վճարողի անվանումը \_\_\_\_\_
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) 

--	--	--	--	--	--	--	--
3. Գործունեության իրականացման վայրը (հասցեն) \_\_\_\_\_

4. «Հաստատագրված վճարների մասին» օրենքի 36 <sup>3</sup> -րդ հոդվածով սահմանված պատիկ թիվը	2 000
---	-------

Ելակետային տվյալ և ուղղիչ գործակից	Սառնանների և (կամ) շոգեբաղնիքների	Սառնաներում և (կամ) շոգեբաղնիքներում չընդգրկված բաղնիքների և (կամ) ցնցուղարանների
5. Ելակետային տվյալը՝ գործունեության կազմակերպման շենք-շինությունների ընդհանուր մակերեսը (մ <sup>2</sup> )		
6. Ուղղիչ գործակիցը	0,5	0,25

Տարեթիվը, ամիսը	Հավաստագրում ներառված ամիսը	Ամսվա համար հաստատագրված վճարի չափը*, հազար դրամ	Նվազեցման ենթակա հաստատագրված վճարի չափը, հազար դրամ

Վճարողի  
(պաշտոնատար անձի)  
ստորագրությունը

գրանցված է \_\_\_\_\_ սպասարկող  
ստորաբաժանման կողմից  
թիվ \_\_\_\_\_ «\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

Կ.Տ.  
«\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

Կ.Տ.

\* Հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս (բացառությամբ Սրբեփանակերտ քաղաքի) լրացուցիչ կիրառվում է 0,3 գործակից:

\*3),\*5),\*6),\*7),\*8)

**ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՑՆՑՈՒՂԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ  
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԱՍԻՆ  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Հայտարարությունը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային մարմին: Հարկային մարմնի կողմից հայտարարությունը հաշվառվելուց (գրանցվելուց) և կնքվելուց հետո մեկ օրինակը վերադարձվում է հաստատագրված վճար վճարողին:

Գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար ներկայացվում է առանձին հայտարարություն:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը:

2-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն):

3-րդ կետում լրացվում է բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպման գործունեության իրականացման վայրը (հասցեն):

5-րդ կետում լրացվում է հաստատագրված վճարի չափի հաշվարկման համար ելակետային տվյալը՝ բաղնիքների և ցնցուղարանների գործունեության կազմակերպման շենք-շինությունների մակերեսը՝ քառակուսի մետրով:

